ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ 8/11.3

2014թ. հունիսի 25-ի թիվ 8 նիստի

ՅԵՆԱՅԻ ՖՐԻԴՐԻԽ ՇԻԼԼԵՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴՈԿՏՈՐ, ՄԱՐԴՈՒ ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԲՋՋԱԳԵՆԵՏԻԿԱՅԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐ, «ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԲՋՋԱԳԵՆԵՏԻԿԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՄՍԱԳՐԻ ՀԻՄՆԱԴԻՐ ԽՄԲԱԳԻՐ ԹՈՄԱՍ ԼԻՐԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐԻ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 6-րդ ենթակետով և ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 6-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Գիտության և կրթության ոլորտում ակնառու նվաճումների, Յենայի Ֆրիդրիխ Շիլլերի համալսարանի և Երևանի պետական համալսարանի միջև գիտական կապերի խորացման, Հայաստանում և Երևանի պետական համալսարանում մոլեկուլային բջջագենետիկայի զարգացման գործում ունեցած մեծ ներդրման և ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի զարգացմանը ցուցաբերած զգալի աջակցության համար Յենայի Ֆրիդրիխ Շիլլերի համալսարանի դոկտոր, Մարդու գենետիկայի ինստիտուտի մոլեկուլային բջջագենետիկայի լաբորատորիայի ղեկավար, <<Մոլեկուլային բջջագենետիկա>> միջազգային ամսագրի հիմնադիր խմբագիր Թոմաս Լիրին շնորհել Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ